

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՄԻ ՔԱՆԻ ԻՕՈՒԲ ԱԼԵՋԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ.

Պ. պ. Ն. Զանաշիաշի: „Религиозныя вѣрованія абхазовъ (Изъ матеріаловъ по абхазской этнографіи)“ և Ն. Մառի՝ „О религиозныхъ вѣрованіяхъ абхазовъ (Къ вопросу объ яфетическомъ культѣ и миѳологіи)“ յօդուածներում. որ գետեղուած են Ռուսաց Գիտութեանց Ճեմարանի հրատարակութեամբ լոյս տեսնող Христианскій Востокъ հանդիսի IV հատորի (1915 թուի) 1 պրակի մէջ. անցողակի կերպով շոշափում է (եր. 81—82, 128) մի շափաղանց հետաքրքիր հարց վերաբերեալ կովկասեան ազգագիտութեանը, այն է՝ արխաղների «ալըշկինար»-ի պաշտամունքի հարցի մասին, դուզընթացաբար հայկական «առլեզ»-ի պաշտամունքի հարցի հետ:

Ներկայ յօդուածիս նպատակն է՝ ի մի ամփոփել բոլոր այն տեղեկութիւնները, որ հաղորդում են այս հարցի շուրջը վերոյիշեալ հեղինակները, հանդերձ մեր մի քանի նոր նկատողութիւնների նոյն հարցի մասին, որին, ի դէպ ասենք, հէնց ինքը պ. Մառը անկախ այն տուեալներից, որ ներկայացրած են յիշեալ երկու աշխատութիւնների մէջ, մտադիր է ընծայել յատուկ յօդուած (եր. 128, ծանօթ.):

Արխաղեան միթոլոգիայի «ալըշկինար»-ը, որ համապատասխանում է հայկական «առլեզ»-«արալլեզ»-ին, դա՛ շան աստուածութիւնն է, որ օժտուած է մի առանձին յատկութիւնով՝ պատերազմի դաշտում ընկած ներսների արիւնը կամ մարմնի ցուազար անդամները լիզելով՝ յարուցանել նոցա:

«Ալըշկինար»-ի պաշտամունքը հէնց այդպիսի դերում արխաղների մէջ, ըստ պ. Զանաշիաշի (օր. ցիւ, եր. 82), հանդէս է գալիս հետեւեալ՝ նրա ձեռքով գրի առած՝ առասպելի մէջ՝

«Հնում, երբ Արխաղիում (Արխաղէթում) ապրում էին հսկայ մարդիկ ու զևեր, կար մի ոմն՝ հսկայ Ասլան, որը հանդիսա չէր տալիս զևերին: Մի անգամ, երբ նա քնած էր, [նորան] գաղտա-

գօղի մօտեցան զևերը. կապեցին մետաքսէ ժապաւէններով [և]՝ կուրացնելով՝ սպանեցին նորան և ձգեցին խորը ջրհոր—փոսի մէջ: Երբ որ նորա շները վերադարձան սովորական որսից, փնտռեցին իրենց տիրոջը, բայց չկարողացան հանել ջրհորից: Եները յարձակուեցին՝ [այդ ժամանակ պատահմամբ] սայլով անցնողի վրայ, քաշեցին վերջինիս սայլից՝ ստիպելով, որ սա հանի իրենց տիրոջը և ազատէ նորան: Եները երեք օր և երեք գիշեր լիզում էին Ասլանին, որի վերադարձին և կեանքը և՛ թէ տեսողութիւնը:

Իրեթէ նոյնը մենք գտնում ենք և Մովսէս Խարենացւոյ Պատմութիւն Հայոց—ի մէջ (I, 15), ուր աւանդում է, թէ ինչպէս Շամիրամ բաւառուէր տայ գորապետաց իւրոց, թէ գէպ լինիցի՝ հնարել սպրեցուցանել զԱրայնս, որը ընկել էր պատերազմի գաշտում. և երբ այդ գորապետները՝ գտնելով Արային՝ գնում են նորան շի վերնատան ապարանիցնս, Շամիրամը ասում է. «Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվերս նորա, և կենդանացիս<sup>1)</sup>»:

Նմանապէս, Փաւստոս Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց—ի մէջ (V, 36), այնտեղ, ուր խօսքը վերաբերում է մահացած Մուշեղ սպարապետին և նրա մասին, թէ ինչպէս սոյ հաւատային ընտանիք նորա մահուն նորա, թէպէտ և տեսանէին զգլուխ նորուն զատ ՚ի մարմնոյն անտի», գտնում ենք հետեւեալ խօսքերը. որ վերադրում են այդ Մուշեղի ընտանիքի անդամներին. «Թէ վասն զի [Մուշեղ] այր քաջ էր. Առիկը իջանեն և յարուցանեն զգա»<sup>2)</sup>:

Անկախ այս հանգամանքից, Եզնիկ Կողբացին իր Եղծ աղանդոց—ի I գրքի մէջ, խօսելով «աղանդոց հեթանոսացն» նիւթի մասին, մատնանշում է, թէ «իրրև գծովացուին՝ զոր ի կովէ ելեալ ասեն, և զպայն իմն ի մարդկանէ», նոյնպէս էլ «զատլեզն [խղեալ է] ի շանէ»: Մի փոքր յետոյ Եզնիկը, կանգ առնելով այն հարցի վրայ, թէ «իմն են անուանում սատլեզ» ԵՍՏՐ. «բալէզ», նկատում է՝ «Ենթամ վիրաւոր սք անկեալ ի պատերազմի գնիցի՝ թէ լիղիցէ և ողջացուցանիցէ, զոր արալէզն կոչեն»: Ապա շարունակում է՝ «Միթէ և զարալիղէն ևս ոք կարիցէ ասել՝ թէ և զայն

1) Մովսէս Խարենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան [«Պատմագիրք հայոց», հար. II, գ. 1], էջմրածին—Տփղիս 1913 թ., էր. 49—50.

2) Փաւստոս Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, հրատ. Գ. Կալցատեանի, Թիփլիս 1913 թ., էր. 336.

ուրուք տեսեալ իցէ, և թէ յառաջին ժամանակն արաւելզք լի-  
զէին՝ զվիրաւորս և ողջացուցանէին, արդ ընդէր ոչ լիզիցեն և  
ողջացուցանիցեն ոչ նոյն պատերազմունք են, և նոյնպէս վիրա-  
ւորք անկանին»<sup>1)</sup>։

Կարգալով պ. Զանաշխայի ձևաքով գրի առած առասպելը  
նրա մասին, թէ ինչպէս «ալլըշկինտր» կոչուած շուն—աստուած-  
ները՝ լիզելով՝ վերակենդանացրին պատերազմում ընկած դիւ-  
ցազն Ատլանին, ըստ պ. Մասի, ի միջի այլոց մտարեւում է  
լիզող շան դերը Ամիրանի մասին գոյութիւն ունեցող վրաց ժո-  
ղովրդական առասպելներում։ Եւ իրօք, վրաց Պրոմէթէոսի մասին  
եղած առասպելի մէջ մենք յանդիպում ենք յիշատակութեան նրա  
մասին, թէ ինչպէս Ամիրանի հետ միասին, որը շղիթայով կապ-  
ուած էր Եալրուզից (Էլրրուսից), գտնուում էր և նրա հաւատա-  
րիմ շունը, որը լիզում էր նրա ժանդոտած կապանքները (ցիտցոցն  
շածոս ցժոհես ցհացցս Եանցոան յաչչես)՝<sup>2)</sup>, որոնք՝ համաձայն գարրին-  
ների ծիսական հարուածների՝ աւազ հինգշարթի առաւօտեան ստա-  
նում էին իրենց նախկին ամրութիւնը՝<sup>3)</sup>։ Ընդ սմին, հետաքրք-  
րիւ է, որ՝ ըստ նոյն առասպելի մի այլ վերսիայի՝ շունը կա-  
պանքների փոխարէն լիզում էր [Ամիրանի] արիւնը՝<sup>4)</sup>։

Իսոյց «առլեզ»—«արաւելզ» կամ «ալլըշկինտր» կոչուած լիզող  
շան պաշտամունքի հետքերը նկատուում է ոչ միայն Կովկասում  
(հայոց, վրացոց, արխաղոց մէջ), այլ և նրա սահմաններից շատ  
հեռու և, ամենից առաջ, դասական Եւնաստանի մէջ։ Այսպէս,  
յայտնի է, որ Էպիդաւրի տաճարին կից պահուող շները, ըստ  
աւանդութեան, լիզում էին բժշկուող հիւանդների մարմնի ցաւա-  
գար անդամները և առողջացնում նոցա՝<sup>5)</sup>։

Եւ հէնց ըստ այգօրինակ դիտողութիւնների արիւն լիզող  
շների վերայ, համաձայն որոշ հետախուզողների կարծիքի, առա-  
ջացած պէտք է լինի՝ այդ շների հանդերձեալ աշխարհի հետ ու-

1) Կղնըկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց [«Ղուկասեան  
Մատենադարան», գ. 14], Թիֆլիզ 1914 թ., եր. 69—70.

2) Պ. Միքիանուսովիլի, յժոհանս Ելլիո, Թիֆլիս 1915 թ.,  
եր. 49.

3) Ա. Ս. Խախանով, Очерка по грузинской словесности,  
պրակ 2, Մոսկվա 1897 թ., եր. 165.

4) Ibid, եր. 167.

5) Ս. Գ. Չազաղով, Культъ фетишей, растеній и живот-  
ныхъ въ древней Греціи.—«Журналь Министерства Народнаго  
Просвѣщенія», 1912 թ., դասական փիլոսոփ. բաժ., եր. 375.

նեցած գաղանի առնչութեան մասին գաղափարը<sup>1)</sup>: Բայց զրանից, շանը սկսել են երեակայել մահուան համբաւարերի գերում, իսկ շունը—աստղը, ըստ այնմ, ստացել է մահագուշակի նշանակութիւն, գառնալով մի տեսակ պահապան հանդուցելոց աշխարհի<sup>2)</sup>:

Մասնաւոր հետաքրքրութիւն կարող է ներկայացնել նաև «առլեզ»—«արալէզ» կամ «ալըշկինար» բառերի ծագման հարցը, որը, սակայն առժամանակ պէտք է մնայ բաց:

Լ. Մելիքսեր Բեկեան.

Թիֆլիս. 11—XII—1917.



1) Ibid., էր. 573.

2) Վ. Ք. Միլլեր, Значение собаки въ мифологическихъ вѣрованіяхъ, Ученыя Записки 1876 թ., էր. 12.—Ի դեպ. տեսլորդ ի ինի իրշատակելի որ շունը՝ իրրեւ մահուան համբաւարեր՝ հանդիսանում է նաև առաջաւորաց պատի մասին գոյութիւն ունեցող յոյն-փրացական վկայութեան մէջ (որտ մասին տես՝ Լ. Մելիքսեր-Բեկեան, Грузинскій изводъ свзанія о постѣ «араджаворъ». — «Христіанскій Востокъ», 609. V. 1916 թ., արտ. 2, էր. 88—90. հմմ. 80—81. հմմ. նաև՝ Ն. Շանազիր, Նոր-Նախիջեւանը եւ Նոր-Նախիջեւանցիք, — «Ազգագրական հանդէս», Գ. IX, 1902 թ., էր. 15).